ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե
abovyan.kotayq@mta.gov.am

13 դեկտեմբերի 2023թ.N Ե-8085

«ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի Ս. Հարությունյան

Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ)և «ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև կնքվել են «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/01-5» (կնքված՝ 22.12.2022թ.) և «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/10-4» (կնքված՝ 30.03.2023թ.) ծածկագրերով Աբովյանի համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների 2023 թվականի կարիքների համար կենտրոնացված կարգով ապրանքի մատակարարման պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագիր), ինչպես նաև Պայմանագրի 8.5, 8.15 կետերի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ.-ի 526-Ն որոշման Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 104-րդ կետի հիման վրա՝ համաձայնագրեր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով՝ տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Աբովյանի համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների տնօրենների կողմից ստացվել են պատճառաբանված գրություններ այն մասին, որ «ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/01-5» և «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/10-4» ծածկագրերով պայմանագրերով և (կամ) համաձայնագրերով նախատեսված

սննդատեսակները սկսած 2023 թվականի նոյեմբերի 20-ից չեն մատակարարվել համապատասխան Աբովյանի համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզներ, ինչի հետևանքով էլ խաթարվել է մանկապարտեզների երեխաների համար նախատեսված ճաշացանկի կազմման գործընթացը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթներով՝ Աբովյանի համայքնապետարանի և «ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/01-5» և «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/10-4» ծածկագրերով պայմանագրերը և (կամ) համաձայնագրերը ամբողջությամբ միակողմանի լուծվում են Գնորդի կողմից:

Ընդունել ի գիտություն.

Եթե «Գնումների մասին»ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ)որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ)որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

Կատ. Զարգացման ծրագրերի և գնումների բաժնի պետ
Ա. Ծատուրյան
+37460536402